ԿԱՊԻՏԱԼ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 7

ք. Իջևան 20 հունիսի 2024թ.

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին փոխարինող Ա. Բաբլումյանի, որը գործում է մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա /այսուհետ Նվիրատու/, մի կողմից, և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Դ. Սարգսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա /այսուհետ Նվիրառու/, մյուս կողմից, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2323-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 06.06.2024թ. թիվ 851-Ն որոշումը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Նվիրատուն Նվիրառուին է հատկացնում 144 631 400 (մեկ հարյուր քառասունչորս միլիոն վեց հարյուր երեսունմեկ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ կապիտալ սուբվենցիա Դիլիջան համայնքի թվով 11 ԲԲԾ-ների վերանորոգման և էներգաարդյունավետ արդիականացման /Գետափնյա 4,6,8,10,12 շենքեր/ աշխատանքների համաֆինանսավորման նպատակով, որի կատարման վերջնաժամկետ է համարվում ս/թ նոյեմբերի 1-ը:

1.2 Նվիրատուի կողմից ֆինանսական միջոցները տրամադրվելու է ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրերի շրջանակներում ներկայացված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի առկայության պարագայում՝ այն տոկոսային հարաբերակցությամբ, ինչ տոկոսային հարաբերակցությամբ նշված է սուբվենցիոն հայտում:

1.3 Համայնքի կողմից Նվիրատուի հատկացված ամբողջական գումարը կապալառուին է փոխանցվում ավարտական փաստաթղթերի (ավարտական ակտեր) առկայության դեպքում:

2. Սուբվենցիան տրամադրելու և ծախսելու կարգը

2.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

2.2 Նվիրառուն պետք է 1.1 կետում նախատեսված գնումը կատարի ,,Գանձապետական համակարգի մասին'', ,,Հաշվապահական հաշվառման մասին'', ,,Գնումների մասին'' և ,,Տեղական ինքնակառավարման մարմինների մասին'' ՀՀ օրենքներով սահմանված պահանջներին համապատասխան և պահանջի դեպքում հնարավորություն տա Նվիրատուի ներկայացուցչին ծանոթանալու գնման գործընթացի հետ կապված փաստաթղթերին:

2.3 Պայմանագրի 1.1 կետում նշված նպատակների իրականացումից հետո Նվիրառուն պարտավոր է հնգօրյա ժամկետում՝

ա/ չօգտագործված գումարը հետ վերադարձնել ՀՀ պետական բյուջե

բ/ Նվիրատուին ներկայացնել վերջնական հաշվետվություն:

2.4 Նվիրատուի կողմից հատկացված գումարը կամ դրա մի մասը ոչ նպատակային օգտագործման դեպքում այն համայնքի բյուջեից ենթակա է հետ գանձման ՀՀ պետական բյուջե:

3. Այլ դրույթներ

3.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

3.3 Սույն պայմանագիրը կազմված է մեկ էջից, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի իրավաբանական հասցեները

Նվիրատու	Նվիրառու
ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ	Դիլիջանի համայնքապետարան
ք. Իջևան, Սահմանադրության 1	ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 076 28 257	ՀՎՀՀ 076 18 909
Հ/Հ 900 371 002 578	Հ/Հ 900 405 051 484
Գլխավոր քարտուղարին փոխարինող	Համայնքի ղեկավար
Ա. Բաբլումյան	Դ. Սարգսյան
Կ.Տ.	Կ.Տ.